# ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ ✦ НАШИ ЮБИЛЯРЫ

## ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

(Ծննդյան 60-ամյակի առթիվ)

1950-ական թթ. վերջերին և 60-ական թթ. սկզբներին սովետական պատմագիտության մեջ ձևավորվեց և հասակ առավ երիտասարդ գիտնականների մի սերունդ, որին վիճակվեց վերջին 2—3 տասնամյակներին իր ծանրակշիռ խոսքն ասել հայագիտության այնպիսի ընդգավառում, որպիսին պատմությունն է: Պատմագիտական իրենց որոնումներում այդ սերնդի ներկայացուցիչները, հիմք ունենալով նախորդների լոված հարուստ ժառանգությունը, լծվեցին կարևոր մի շարք պրոբլեմների լուսաբանման գործին և ընթերցողի սեղանին դրեցին մեծ ու փոքր ծավալի շատ ու շատ մնայուն երկեր: Նրանց թանձրի շնորհիվ էր, որ մեզանում գիտական հիմնավոր ու համակողմանի ուսումնասիրության առարկա դարձավ գաղութաթաթ պատմությունը՝ հարցերի ու խնդիրների իր բազմաբովանդակ ընդգրկմամբ:

Վ. Բարխուդարյանը հիշյալ սերնդի լավագույն ներկայացուցիչներից է, մի գիտնական, որն իր աշխատություններով և գիտակազմակերպչական ընդունակություններով լայն ճանաչում է գտել գիտական և ընթերցող հասարակայնության մեջ:

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանը ծնվել է 1927 թ. Վրացական ՍՍՀ Սարնեուլիի շրջանի Ախֆյոռաի գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Վ. Բարխուդարյանը ընդունվում է Երևանի համալսարանի պատմության ֆակուլտետը, որն ավարտում է 1950 թ.: 1950—1954 թթ. նա սովորում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում՝ հետազոտության թեմա ունենալով «Ֆեոդալական հողատիրությունը Հայաստանում IX—XI դարերում»: 1954 թ. այդ նույն թեմայով նա պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա և աշխատանքի անցնում ՀՍՍՀ ԳԱ պատմության բանգարանում որպես կրտսեր գիտաշխատող: 1958 թ. Վ. Բարխուդարյանը փոխադրվում է աշխատանքի ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, որտեղ 1959—1963 թթ. գրաղեցնում է ինստիտուտի գիտական քարտուղարի, 1963—1967 թթ.՝ ավագ գիտաշխատողի, իսկ 1967 թ. մինչ այսօր՝ ինստիտուտի դիրեկտորի գիտական գծով տեղակալի պաշտոնը: 1980 թ. համատեղության կարգով վարում է ինստիտուտի գաղութաթաթ պատմության բաժնի վարիչի պաշտոնը:

Վ. Բարխուդարյանի ավելի քան քառորդդարյա գիտական գործունեությունն ընթացել է պատմության ինստիտուտում: Արդյունավետ է եղել այդ գործունեությունը և նպատակասլաց: Նա մեկն էր նրանցից, ովքեր գիտակցելով գաղութաթաթ պատմության ուսումնասիրման հույժ կարևորությունը, ոչ միայն դարձան այդ գործի կազմակերպիչներն ու սկզբնավորողները, այլև իրենց ուսերի վրա վերցրին պրոբլեմի՝ գիտական մշակման առումով ծանր խնդիրները: Այդ խնդիրներից էր հայաթաթ նշանավոր գաղթավայրի՝ Նոր Նախիջևանի պատմության համակողմանի հետազոտումը, որին ձեռնամուխ եղավ Վ. Բարխուդարյանը, դրան նվիրելով իր գի-

տական գործունեության ավելի քան երկու տասնամյակները: Երկարատև աշխատանքի շնորհիվ լույս աշխարհ եկավ նրա երկհատորանոց արժեքավոր մենագրությունը՝ «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն» ընդհանուր վերնագրով (1967. 1965 թթ.):

Աշխատության առաջին գիրքը, որը ներառում է գաղութի հիմնադրումից (1779 թ.) մինչև 1801 թ. ժամանակամիջոցը, արժանացավ գիտական հասարակայնության ջերմ ընդունելությանն ու գնահատանքին: Եվ դա պայմանավորված էր ոչ միայն թեմայի նորությամբ: Գիրքը դրվատող հանգամանքները առաջին հերթին աղերսվում էին նրա հարուստ բովանդակության, հետաքրքիր և ուշագրավ հարցադրումների ու գրանց գիտական խոր մեկնաբանության հետ: Վ. Բարխուդարյանի գրքում լավագույնս հաղթահարված էին այն դժվարությունները, որոնք անխուսափելիորեն հառնում են հետազոտողի առաջ խոշոր գաղութների ամբողջական պատմությունը շարադրելիս, տնտեսական բազմակողմանի հարցեր, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանք, գաղութի իրավական ստատուսը տվյալ երկրում, առնչությունները հայրենիքի հետ, սոցիալական վիճակն ու դասակարգային ընդվզումները և այլն, և այլն, այսինքն հարցեր, որոնք պարզաբանելու համար ոչ միայն փաստական հարուստ բազա պետք է ստեղծել, այլև ունենալ պատմագիտական բարձր պատրաստություն: Վ. Բարխուդարյանի «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն» երկհատորանոց մենագրությունը անառարկելիորեն վկայում է, որ նրա հեղինակը լայն ու խոր պատրաստության տեր պատմաբան է:

Մենագրության մեջ գաղութի ամբողջական պատմությունը ներկայացված է Ռուսաստանի և հայ իրականության XVIII—XX դդ. պատմության, հատկապես հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի առնչությունների ոլորտում: Մանրազնին հետազոտված է Դոնի հայության տնտեսական կյանքը, որը հնարավորություն է տվել մատնանշելու հայկական գաղութի դերը Հարավային Ռուսաստանի տնտեսական կյանքում: Գրքում ցույց է տրված, որ հայկական գաղութը հայ և ռուս մշակույթների ու հասարակական մտքի փոխադարձ կապերի և մերձեցման կարևոր օղակ է հանդիսացել:

Վ. Բարխուդարյանի գիտական հետազոտություններին մեջ զգալի տեղ են գրավում նաև Ռուսաստանում հայկական գաղթօջախների առաջացման և պատմագրության պրոբլեմները: Առաջին գլխում նրա ուսումնասիրությունների կենտրոնում գտնվել են այդ գաղթօջախների առաջացման քաղաքական ու տնտեսական գրգռիչների բացահայտումը, պատմական այն իրողությունների լուսաբանումը, որոնց թելադրանքով կյանքի կոչվեցին հայկական գաղութները Ռուսաստանում: Իսկ պատմագրական բնույթի իր աշխատանքներում Վ. Բարխուդարյանը անդրադարձել և համակողմանի քննարկել է ոչ միայն ընդհանրացնող բնույթի աշխատությունները և ցույց տվել սովետահայ պատմագրության որոշակի նվաճումները, այլև ուսումնասիրման խնդիր է դարձրել մի շարք պրոբլեմատիկ հարցեր (հայ-ռուս հարաբերություններ, 1905—1907 թթ. հեղափոխական շարժումներ և այլն):

Քսան տարի է արդեն, ինչ Վ. Բարխուդարյանը հանդիսանում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի դիրեկտորի գիտական դեղով ստեղծագործ: Այդ. ինչպես և հայ գաղթավայրերի պատմության բաժնի վարիչն պաշտոններում լիովին դրսևորվեցին նրա գիտակազմակերպչական ակնհայտ ընդունակությունները: Գիտնականը լուրջ մասնակցություն ունեցավ հայ ժողովրդի բազմահատոր պատմության ստեղծմանը, իսկ այժմ, ինստիտուտի գիտական կոլեկտիվի հետ միասին, նաև մեծ ջանքեր է գործադրում հայ ժողովրդի ոուսերեն բառհատոր պատմության ստեղծման վրա: Նրա սեմիոտիկական ղեկավարությամբ լույս տեսավ ՀՍՍՀ ԳԱ և Հունգարական գիտությունների ակադեմիայի «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից» հոդվածների ժողովածուն (1983 թ.), որն արժանացավ սովետական և հունգարական մամուլի դրվատանքին:

Վ. Բարխուդարյանը լայն մասնակցություն է ունենում հանրապետության հասարակական-գիտական կյանքին: Հանդիսանալով գիտական ինգ խորհուրդների անդամ, նա ակտիվորեն նպաստում է գիտական բնմանների մշակման և կազրերի պատրաստման գործին, ըստ ամենայնի ոգնում ասպիրանտների ու երիտասարդ գիտնականների գիտական և քաղաքական մակարդակի բարձրացմանը:

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Բարխուդարյանը այսօր էլ գտնվում է իր ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում: Եվ գիտական հասարակայնությունը լիահույս է, որ նա իր գիտական ու կազմակերպչական կարողությունները այսուհետև ևս անմնացորդ նվիրումով ի սպաս է դնելու հայրենի պատմության մշակման գործին: Ցանկանք նրան քաջառողջություն, երկար տարիների կյանք և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ